

- Պաթոսիւ :** Կրեմնացիք կուսակից եղեն Անտոնիոսի ընդդէմ Ոկտավիանեայ . վասն որոյ տպա յետ պատերազմին առւաւ Կրեմնա հինաւուրց զօրաց յազմականին . և զի չէր այն բաւտկան , յաւելաւ և մասն ինչ յանդաստանաց Մանտուայ . վասն որոյ եղելի և զնա կոչէ վասն սահմանակիցն գոլոյ հիքին Կրեմնայ :
34. Գեղջ . լա . լախս. թուի վասակար , յորմէ ճարակեալ մեղուք՝ դառն գործեն մեղք . վասն որոյ խոսի մեղք Կորոփկայ վասն գեղձից և մոլախնդի առատ ՚ի կողուղին գոլոյ : Եւ զկզզիս զայս , որ ՚ի միջերկրական ծովու մերձ ՚ի Սարդինիա և ՚ի Սիկիլիա , կոչէին Յոյնք Կիրնոս՝ յանուանէ Կիրնեայ ուրումն թագաւորի :
35. Զմինձ տես ՚ի ծաղկ . Ա . 84 :
38. Վարու իմա զայն , զորմէ ասացաք ՚ի ծաղկ . Զ . 8 : Իսկ Կինաս զմեծին Պոմպէի թոռն ՚ի դատերէ , որ յառաջն թշնամի Ոկտավիանոսի և ապա եգիտ չնորհս առ նմա , և բգեացն իսկ եկաց ՚ի Հոռվի:
57. Դիւնէան կոչէ զկեսար , զի Ենէասայ ասի սերեալ , և մայր Ենէայ համարի Աստղիկն՝ զոր Դիրնէ յաւերժհարսն ծնաւ ՚ի Դիրսէ ըստ բաղմոց :
- Աստանօր Մենալկաս կամ Վիրդիլխօսի առ հովին Դափնի բարեկամ իւր զմահուանէն Յուլիոսի կեսարու , յորոյ ՚ի դամբանական հանդիխին վարսամ յերկինս ասի երեալընդ եօթնեսկ մի :
58. Առասպելեն գայլոց Կերկերել զայնոսիկ՝ զորս ներեանք նախ տեսանեն , և կերկերիլ՝ եթէ ինքեանք նախ յակն անկանիցին : Աստանօր Մերիս պատճառս գադարելոյ յերդոցն ածէ զմուացօնս իւր և զնուաղումն ձայնին , այլովքն հանդերձ , և Լիկիդաս հակառակօքն յորդորէ զնա յերդ :
61. Իմա զալիս Մինկեայ գետոյ , որ թանան զՄանտուա և զմերձակայ գաւառս :
64. Բիւնուր կամ Ոկտոս արքայ Ետրուրիոյ , որդի Տիբեր գետոյ և Մանտովայ յաւերժհարսին , յորմէ անուանակոչեցաւ քաղաքն Մանտուա կառուցեալ ՚ի Բիանորէ : Ծիրիմսորա առ Ճանապարհաւն կայր ըստ նախնեացն սովորութեան . վասն որոյ արձանագիրք դամբանականք առ ուղեորս բարբառին . Կաց ուղեորդ , Դարձիր հիւրդ , և այլն :

Ասորեստան :

Ասորեստան Ասիոյ Տաճկաստանին ամենէն աւելի հարաւային մասն է , որուն մէջ կը բովանդակուին այն ամէն գաւառները որ կ՚իյնան ընդ մէջ Տարոսի , Ո՚իջերկրականին , Լըջանիկն Արաբիոյ և Հզիպտոսի՝ զոր նախնիք Հզիրատեան Ասորեստան , Բուն Ասորեստան , Աելեսիւրիա և Պաղեստին կը կոչէին : Լըրկու շղթայք լերանց Արաբիոյ կողմէն հարաւային Ասորեստան կը մօնեն . աս շղթաներէն մէկը որ աւելի արեամուտք կ՚իյնայ՝ Ո՚իջերկրականին երկայնութեամբը երթալով Ասորեստանը ծովէն կը բաժնէ . աս լերանց մէկ ձիւղը շատ նշանաւոր եղած է Լարմելոս և Թամբօր լերանց պատճառաւ որ աս գօտոյս մէջը կը գտնուին . ևս առաւել Թամբօր լերան համար , որ Ա . Դրոց յիշատակութիւններէն դուրս՝ հոչակաւոր է նաև 1799ն Ո՚եծին՝ Լաբոլէնի հօն ըրած մէկ պատերազմովը : Իսկ միւս շղթան գրեթէ առջինին զուգահեռական ընթացքով մը իր մէջը կը պարունակէ Ո՚եռեալ ծովը , և առջին ձիւղին հետ միանալով կը ձեացընեն

Հակալիբանան կամ Կնուրեան լերանց առաջքը՝ որ հիւսիսային սահմանաց մօտ Հաւրոսեան լերանց մեծ շըղթային հետ կը միանայ . միայն Հակալիբանան լերանց մէջէն ձիւղ մը կամ շղթայ մըն ալ կը բաժնուի՝ որ են բուն Լիբանանու լեռները :

Ասորեստանի գլխաւոր գետերն են Որոնդէս , Հզիրատ և Հորդանան : Լըրկիրը լի է ձորերով ու հովիտներով . մաս մըն ալ բոլորովին անապատ է և աւազային :

Ասորեստան թէ հին և թէ նոր ատեններս իր հրաբուխներուն պատճառաւ մեծամեծ երկրաշարժներ կրած է , որոնցմէ յետինը գեռ շատին մոքին մէջ կենդանի է անշուշտ որ 1822ին պատահեցաւ , որով հողուն տակ թաղուեցան հալէպ , Կնոտիոք և ուրիշ նշանաւոր քաղաքներ : Բնակիչքը մեծաւ մասամբ Արաբացիք և Հոյնք են . ոչինչ մնացորդ մըն ալ կայ Ասորեստանի որ Անուարէ կամ Կոստրէ կը կոչուին . իսկ Մէռուալքան ըսուածները գեռ ցայսօր կրակ կը պաշտեն . աս այլ և այլ ցեղ ժողովուրդները 60,000էն աւելի չեն , որոնցմէ առաջինները ընդ մէջ իրանան և Հակալիբանան լերանց դաշտագետինները կը

բնակին . իսկ երկրորդները՝ | իբանաւնու վրայ Տիւրզիներուն և Պ'արոնիտներուն մէջ : Տիւրզիք | իբանանու հարաւային կողմը կը բնակին , որոնց կրօնքը թէպէտ մահմետական կ'ըսուի՝ այլ այնչափ փոփոխուած է՝ որ Ա'ահմետականք հերետիկոսական աղանդ մը կը սեպեն : յաղովուրդը երկու բաժնուած է , ազնուականք և գեղացիք . իրենց գլուխը էմբէ կը կոչուի որ ամէն երկու տարին մէյմը ազնուականները կ'ընտրեն , ու Տաճկի տէրութիւնը կը հաստատէ : | եզունին արաբերէնն է , կամ անոր մէկ տեսափկը . Տիւրզիք 200,000էն աւելի կը համրուին : Ոչնչ նուազ է նաև Ա'արոնիտներուն թիւը , որոնք քրիստոնէական աղանդաւորք են , ու կը բնակին | իբանանու միջակայքը , և Ա'րաբացւոցմէ անկախ՝ միայն Տաճկի դրան հարկ մը կը վճարեն :

Ա'սորեստանի ժողովուրդներուն մէջ ցրուած շատ մըն ալ Խիւրզմէնք և Քիւրտք կան :

Ա'սորեստան չորս կուսակալութիւն (փաշայութիւն) կը բաժնուի , Հալեպի , Տրիպոլսոյ , Աքեայի և Պամասկոսի կամ Խրուսաղեմի : Հալէպի կուսակալութիւնը կը բովանդակէ այն երկիրը՝ որուն հին ատեն Եփրատեան Ա'սորեստան և Ա'նտիոքեան գաւառ կ'ըսէին : Հալէպի բնակիչքը 200,000 է . իրեն նաւահանդիսուր կը սեպուի Ա'զեքսանդրիադ կամ Խակենտէրուն ըսուածը , որ վատառողջ կլիմային պատճառաւ անմշակ է և սակաւաբնակ : Իսկ Ա'նտիոք որ Ա'լելէկիացւոց թագաւորներուն աթուանիստ քաղաքը եղաւ , և Խաչակրաց ժամանակ ասպետաց մայրաքաղաք անուանուեցաւ , բոլորովին իր հին մեծութենէն ինկած՝ հազիւթէ 10,000 բնակիչ կրնայ ունենալ :

Տրիպոլսոյ կուսակալութիւնը հին ատեն հիւսիսային Փիւնիկիա ըսուածն էր : Տրիպոլս Ա'իջերկրականին վրայ բանուկ վաճառականութիւն ունեցող քաղաք է . այս կուսակալութեան տակ երեւելի են | աւոգիկիա իր առատ և ազնիւ ընչաղեղին համար , և Պարզո-

զա : Հարաւային Փիւնիկիա և Պալիլիա հեթանոսաց ըսուած գաւառները , հիմակուան Աքեայի կուսակալութիւնը կը կազմեն , որուն Քոյնք և Հռոմայեցիք Պտղումայիս կ'ըսէին և հիմա Ա . Յովհ . Կ'իրեայ կամ Աքեայ կ'ըսուի : Աքեայ գրեթէ 20,000 բնակիչ ունի , և ապահով ու բանուկ նաւահան գիստ մը : Խաչակրաց ժամանակ Փիւնիպոս (Պոստոս Պաղղիոյ թագաւորը և Հռիքարտոս Պուրծասիրտն Ա'նդղիոյ թագաւորը աս քաղքիս տիրապետեցին : Իսկ 1799էն Մեծին Խաբուկոնի պաշարմունքովը առնուելէն ետքը՝ Խապահիմին ձեռքն ինկաւ , որ Ա'էհէմմէտ Ա'լի , Եգիպտոսի կուսակալին որդին էր . ինչուան որ Ա'նդղիացիք 1840էն Տաճկի տէրութեան հետ դաշնակից ըլլալով՝ նորէն իրեն դարձուցին :

Այս կուսակալութեանս տակն են , ուրիշ գաւառներէ զատ , Աուր և Աահտա . առաջինը 1000 բնակչօք , Երկրորդը 7000էն աւելի : Աուր՝ Տիւրոսի աւերակներուն վրայ կանգնուած է . Աահտա ալ Ա'իդոնին վրայ , որոնք երկուքն ալ ատեն մը ծովու վրայ իրարու նախանձորդք և ամենաձոխ ամբարանոցք էին վաճառականութեան : Իսյ նաև Պէյրութ՝ որ Ա իբանանու , Հակալիքանանու և Պամասկոսի բերքերուն շտեմարան կրնայ ըսուիլ : Բնակիչքը 10,000էն աւելի քան թէ նուազ : Ինչուան անցեալ դարուն վերջերը Տիւրզիներուն իշխանութեան տակն էր ասքաղաքս , թէպէտե 1780էն սկսեալ Տաճկի տէրութիւնը զօրք ունէր այն կողմերը : Ա'էհէմմէտ Ա'լի Տիւրզիներուն յաղթեց ու Պէյրութը առաւ , բայց չկրցաւ երկայն ժամանակ իրեն պահել . վասն զի 1840էն Աքեայի հետ Տաճկի տէրութեան դարձուց :

Պամասկոսի կուսակալութեան մէջ կը բովանդակուին բուն Ա'սորեստան և Պաղեստին ըսուած գաւառները . իսկ Պամասկոս , որ նոյն գաւառին մայրաքաղաքն է , Ա'սորեստանի ամենէն աւելի ծաղկած քաղաքը կրնայ սեպուիլ , և գրեթէ 180,000 բնակիչք ունի : Պա-

մասկոսի կուսակալութեան մէջն են նաև Արուսաղէմ, Ռեթղէհէմ, Պա-
զարէթ, Ամարիա, Տիբերիա և Պալ-
միրայի աւերակները որ Աղոմն շինած-
է կ'ըսեն, և հովմէական կայսրութե-
ժամանակ մեծահարուստ քաղաք էր :

Ասորեստան ոչ երեկք բոլորովին Տաճ-
կի տէրութե տակն եղաւ : Տիւրզիք և
Արաբացիք յամառութք իրենց անկա-
խութիւնը պաշտաննեցին . 1832ին ՈՒ-
հէմմէտ Ալի այս ապստամբներս հնա-
զանդեցրնելու պատրուակաւ, Դրան
հրամանաւը հօն Խգիպտացի զօրաց
բազմաթիւ բանակ մը իսաւրեց . բայց
ՈՒհէմմէտ Ալի, ինչպէս որ Խգիպտոսը
Տաճկի տէրութեան անուամբը կառա-
վարեմ ըսելով՝ ինքզինքը բացարձակ
տէր հրատարակեց Խգիպտոսի, այս-
պէս ալ նաև Ասորեստանը իրեն սեպ-
հականեց . բայց 1838ին Տաճկի տէրու-
թիւնը տեսնելով որ բնաւ ինքը ոչ բո-
ղոքոյ և ոչ ալ սպառնալեաց մտիկ կ'ը-
ներ, բանակ մը զօրաց և պղտի նաւա-
տորմիղ մը ՈՒհէմմէտ Ալիին գէմ
իսաւրեց . զօրքերը յաղթուեցան, նաւա-
տորմիղն ալ ծովակալին մատնութեամ-
բը անձնատուր եղաւ . այսպիսի աղիտից
մէջ Տաճկաստան եւրոպական տէրու-
թեանց դիմեց, և Ինգղոյ, Առուաց,
Աստրիոյ և Բրուսիոյ օգնելովը կոր-
սընցուցած երկիրները նորէն ստացաւ :

Դամասկոս քաղաքը :

Դամասկոս, որ հիմա ամենուն բե-
րանը ցաւօք կը յիշուի, Ասորեստանի
երեւի, հին և առաջին կարգի հետա-
քըննական քաղաքներէն մէկն է : Ար-
գաւանդաշնորդ դաշտավայրի մը կեդրո-
նը, անթիւ վազուկ ջրերով, հակալի-
բանանու և ՈՒեծ Ինապտին վերջին
ծայրերը կ'իյնայ, 80 հազարամէջը ծո-
վէն հետու :

Դամասկոսի հիմնադիր Աքրահամ
նահապետը կը սեպուի, կամ առջի դա-
րու նահապետներէն մէկը . իրեն պատ-
մական անցքերուն գալով՝ մինչեւ Դաւ-
թի թագաւորութիւնը որոշ բան մը

չենք գիտեր . աս միայն յայտնի է որ Դա-
ւթի իր թագաւորութեան կէսերուն՝
բոլոր քաղքին տիրապետեց : Խակղադ-
փաղասարը Ասորետոց թագաւորը, Դա-
րայելացւոց ձեռքէն յափշտակեց և բնա-
կիչքը ՈՒիջագետք խաւրեց . անկէ ին-
չուան Արաբացւոց ծագումը՝ Դամա-
սկոս ալ Ասորեստանի մէկալ քաղաքնե-
րուն նման, երբեմն Պարսից, երբեմն
Հունաց, երբեմն Հռոմայեցւոց և եր-
բեմն ալ Արևելեան կայսերաց իշխա-
նութեան տակ մտաւ . 633ին Արաբա-
ցիք, որոնց հրամանատարն էր երևելին
Դալէտ, երկայն պաշարմունքով առին
զԴամասկոս . քաղաքը պաշտանողն
էր Խովմաս անունով յոյն մը, որ իր
արիասիրտ Ճգամբը շատ մեծ անուն թո-
ղուց ապագայից առջեւ : Ութերորդ,
իններորդ և տասներորդ դարերուն՝
Դամասկոս հետզէտէ նոր տէրեր և
առաջնորդներ ունեցաւ : 1248ին Խա-
չակիքը Լուղովիկոս է Գաղղիոյ թա-
գաւորին, և Գանրատոս Գերմանիոյ
կայսեր, և ուրիշ քրիստոնեայ ասպե-
տաց առաջնորդութեամբը երբ քաղքին
տիրելու մօտ էին, յանկարծ Հալէպի
և Ոսուլի իշխանները մեծազօր պա-
տրաստութեամբ օգնութեան հասան
քաղքին, որով քրիստոնեայք պաշար-
մունքնին թողլով ետ քաշուելու հար-
կագրուեցան : Լուղ մնաց դարձեալ
Արաբացւոց ձեռքը, ու անկէ քանի մը
տարիէն անցաւ Խգիպտոսի սուլդաննե-
րուն, որոնք ինչուան Խաթարաց | էնկ
թիմուր թագաւորին ըրած ահեղ ար-
շաւանաց ժամանակը ձեռքերնին պա-
հեցին :

Այս երեւի աշխարհակալը բոլոր
Հնդկաստանը նուածելին ետև յարձա-
կեցաւ Ասորեստանի վրայ, և 1400ին
Դամասկոսին իշխելով բոլոր քաղաքը
հիմնայատակ կործանեց . բնակիչքն ալ
բոլոր թրէ անցուց, և միայն մէկ աղ-
գատոհմի խնայեց, նոյն տանը գլխաւո-
րին Ալիին համար գերեզման մը շինել
տուած ըլլալուն պատճառաւ . ինայեց
նաև քանի մը Ճարտարարուեստ հիւ-
ներու և Ոմըրղանտ տարաւ :